ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ հետեւյալ թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար.

շտապ օգնության բրիգադայի բուժքույր – 2 հաստիք

ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ (գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն եւ ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայասատանի Հանրապետության կողմից),որը կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Միջին մասնագիտական կրթության առկայություն.-բուժքույր:
2. Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն.-բուժքույր:
3. Էթիկայի և բժշկական էթիկայի կանոնների իմացություն.-բուժքույր:

Լրացուցիչ պայմաններ՝

1. Համակարգչով աշխատելու ունակություն-բուժքույր:
2. Առնվազն մեկ օտար լեզվի իմացություն.բուժքույր:
3. Տրամաբանելու եւ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն բուժքույր,.:
4. **Մրցույթը կկայանա 28.10.2020թ. ժամը 12:00-ին «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ում (հասցե՝ ք., Գյումրի, Մազմանյան 3բ):Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:Հարցազրույցը տեսաձայնագրվում և արձանագրվում է:**

Դիմողները «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. դիմում /լրացվում է տեղում/
2. մեկ լուսանկար 3x4 չափի
3. քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի պատճեն ու բնօրինակը
6. կրթությունը հավաստող դիպլոմի եւ վերապատրաստման վկայականի բնօրինակներն ու պատճենները
7. արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը:
8. առողջության մասին տեղեկանք տեղամասային պոլիկլինիկայից՝ ձեւ 086 (տվյալ օրվա դրությամբ)
9. նախորդ աշխատավայրից (առկայության դեպքում) բնութագիր

Տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր, ժամը 9-ից մինչեւ 15-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 26.10.2020թ.:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ, հասցե՝ ք., Գյումրի, Մազմանյան 3բ, կամ զանգահարել 0312 52512 հեռախոսահամարով: